

Տ. ՊԱՐՈՒՅՐ ՔԱՎԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՌԻՓՄԻՍԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(9 սեպտեմբերի 2001 թ.)

*«Տո՛ր զօրութիւն ծառայի քոյ,
կեցո՛ր զորդի աղախնոյ քոյ, և
արա առ իս նշան բարութեան»:
(Սղմ. 2Ե 16-17)*

«Յանուն Հօր ևս Արդոյ ևս Հոգոյն Սրբոյ. ամեն»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Դարերի խորքից հնչող սաղմոսերգուի ձայնն է, որ որպես հոգեբույս աղոթք շուրթերիս բարձրանում է առ Աստված՝ հայցելու Տիրոջ ամենակալ զորությունն ու պահպանությունը Իր նորած ծառային:

40 օրեր առաջ, Տիրոջ ողորմությամբ և իմ ազադ կամքով, ծնրադրեցի Մայր Աթոռի Քրիստոսաւէ Սուրբ Սեղանի առջև և ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր փնտրիկությամբ և ձեռամբ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերսերյանի ընդունեցի քահանայության երկնապարզ և շնորհը՝ ճակատիս և աջիս մյուռնահեղ օծմամբ:

«Փա՛նք քեզ, Աստուած, փա՛նք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փա՛նք քեզ»:

40-օրյա պահքի և աղոթքի հարաբեր շրջանից հետո այսօր, որպես «նշան բարութեան», Տերունավանդ շնորհն ունեն մատուցելու առաջին Պատարագս, որ սրբազան մեր հայրերի բնութագրմամբ կոչվում է «Անդրանիկ Պատարագ»։ Երկնապարտ նշան բարության, որ քայլերս առաջնորդեց հինավուրց այս փաճար և արժանի դարձրեց նվաստիս մոտենալ Սուրբ Սեղանին և աղոթաբայր այս հարկից ներս սրբի խոնարհ սպասավորությամբ հաղորդակցվել Տիրոջ Փրկարար Մարմնին և Սուրբ Արյանը:

Նվիրական այս պահին մտովի փեղափոխվում եմ հոգևոր դարբնարանս՝ Սևանի թերակղզի, ուր ինը փարիներ առաջ, որպես նոր ընդունված սան, մուտք գործեցի Վազգենյան Դպրանոց՝ անհասարար առաջին քայլերս անելով հոգևոր ասպարեզից ներս: Թերակղզու բլրին, դեպի երկինք խոյացող Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ վանքերի հավերժական հայացքի ներքո, խմորվեց հոգևորականի կերպարս և կերպվեց ոգիս: Շնորհակալ այդ գործում իրենց մասն ու բաժինն ունեցան ճեմարանի դասախոսները, որոնք փարիների ամբարած գիտելիքներն ու փորձառությունը սիրով ջամբեցին մեզ՝ ձև և փեսք փալով պատրանի մեր հոգուն: Հոգեկան երջանկության այս պահին հոգու պարտք ունեմ սրբազան այս խորանից ի սրբոյ շնորհակալություն հայտնելու երախտարժան իմ դասախոսներին՝ մաղթելով նրանց քաջառող-

շուրթյուն և Տիրոջ օգնականությունը՝ հոգևոր սպասավորների նոր սերունդներ կըրթելու և դաստիարակելու Աստվածահաճո հանձնառության մեջ:

Սրբի ցավով աղոթք եմ բարձրացնում առ Աստված հանգուցյալ ուսուցիչներիս բարեհիշատակ հոգիների հանգստության համար: Որդիական անկեղծ զգացումներով խոնարհվում եմ Երջանկափիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետների լույս հիշատակի առջև, որոնց հայրական օրհնությամբ, իմաստուն խրատներով ու պարգևներով հասակ առա՝ արժանանալով նաև նրանց աշակերտելու երջանիկ բախտին. «Տեր, հանգ՛ գեղգիս նոցա ի լոյս երեսաց աստուածութեան քո»:

Հոգևորություն և քահանայության բարձր շնորհին, թերևս, չէի արժանանա, և չէր գծագրվի հոգևորականիս ամբողջական կերպարը, եթե չլինեին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախանձախնդիր ջանքերը: Նորին Սրբության՝ այն ժամանակ դեռ Գարեգին Սրբազանի հոգու փայփայած երազն էր փեսնել հոգևորական նոր սերունդ երեք կարևոր սրբությունների՝ Եկեղեցու պայծառության, Հայրենիքի բարգավաճման և հարազատ ժողովրդի ծառայության անսակարկ գիտակցությամբ օժտված: Ուսանողական փարիսներից մինչ այսօր Գարեգին Վեհափառը հայրական հոգաբար սիրով հետևում է հոգևոր իր զավակներին: Շնորհակալության, երախտիքի և որդիական ջերմ զգացումներով է լցված հոգիս առ Ամենայն Հայոց Հայրապետ, ում ցկյանս պարտական եմ՝ անձս սիրելի իմ ժողովրդի հոգևոր ծառայության գոհասեղանին դնելու համար: Վստահ եմ՝ ուրախ է այսօր Հայոց Հայրապետը՝ ճաշակելով իր սերմանած բարի հունդերի երախտյալիքը: Հրճվում է այսօր Հայրապետի հոգին, քանզի ամուսնացյալ և կուսակրոն յոթ քահանաներ այս պահին անդրանիկ իրենց Պատարագն են մատուցում փարբեր եկեղեցիներում, որ նշանակում է՝ ևս յոթ մշակներ կանչվեցին Տիրոջ այգու բարեգարդման համար:

Սրբազան շնորհակալություններս եմ բերում նաև հոգևոր ծնողիս՝ Գերաշնորհ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերպերյանին՝ քահանայության կոչվելու առաջին օրերից ամենայն հետևողությամբ և սիրով պարբերաբար հանդիպումները, հոգևոր գրույցները, հովվական իր հարուստ փորձառության փոխանցումը և հոգաբար վերաբերմունքը 40-օրյա մեր պահքի անբաժան մասը դարձնելու համար: Եվ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր հարազատաբար այցելեցին մեզ:

Գոհունակությունս և շնորհավորանքս եմ հղում Ս. Հռիփսիմե վանքի նորանշանակ վանահայր, Հոգեշնորհ Ս. Մարթնոս արեղա Պողոսյանին և սիրելի եղբորս՝ Արժանապատիվ Ս. Խորեն քահանա Կիրակոսյանին, որոնք ամենայն սիրով ընդառաջեցին անդրանիկ Պատարագս այս փաճարում մատուցելու ցանկությամբ:

Շրջադարձային նշանակություն ունի այս օրն ինձ համար, որ բարեփոխելու է մնացյալ իմ ամբողջ կյանքի ուղին, քանզի մկրտությունից հետո այսօր հոգևոր իմ երկրորդ վերածննդյան փոռն է՝ անդրանիկ Պատարագս:

Ինձ համար երկու կարևոր խորհուրդ ունի անդրանիկ Պատարագը. ուխտ և ծառայություն՝ երկու էական գաղափարներ, որ անքակտելիորեն ներհյուսված լինելով իրար՝ կազմում են քահանայի առաքելության «սրբություն սրբոցը»:

Ուխտը մարդ անհատի՝ Աստծո հետ կնքված դաշինքն է, յուրահապուկ երդումը, որի արդյունքում սկսվում է Աստված-մարդ հարաբերությունների երկխոսությունը: Հին Ուխտի պարամության մեջ Աստված ջրհեղեղից հետո ընտրյալ Իր ժողովրդի նա-
հապետների՝ Նոյի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի և Հովսեփի հետ ուխտ կապեց՝
ասելով. «Ահա ես ուխտ եմ դնում ձեզ հետ, ձեզնից հետո եկող ձեր սերունդների
հետ... իմ հաստատված ուխտի նշանն այս է. իմ ծիածանը կկապեմ ամպերի մեջ: Եվ
դա թող լինի իմ ու ողջ երկրի միջև հավիտենական ուխտի նշանը» (Ծննդ. Թ-12-13):

Հավաքարիմ Իր ուխտին՝ Աստված հովվեց հրեա ժողովրդին և հակառակ անա-
պարի քառասնամյա դեգերումների ընթացքում ուխտի հանդեպ նրանց անհավա-
պարմության՝ Տերն Իր խոստման համաձայն փրկեց խրայելացիներին և առաջնոր-
դեց նրանց Քանանի երկիր: Նույնիսկ Դավիթ թագավորը՝ Հին Ուխտի ամենաաստ-
վածապաշտ արքան, որի օրոք Իսրայելի թագավորությունը երանելի աննախադեպ
բարձրության էր հասել, փարակուսանքներից ու նեղություններից փորձության մեջ
ընկնելով աղոթում էր Աստծուն՝ խնդրելով Տիրոջ օգնականությունն ու մխի-
թարությունը:

Անդրանիկ Պարարագը նաև ուխտի Պարարագ է, քանզի այսօր որպես նշան
բարության փռելի ունեցավ իմ առաջին ժամադրությունն Աստծո հետ, որի ականա-
պես վկաները դարձաք դուք, սիրելի հավաքացյալներ: Աստվածաբես այս խորա-
նից ուխտում եմ հավաքարիմ մնալ Տիրոջ պարվիրաններին և ամենայն սիրով
նվիրվել հարազատ իմ Եկեղեցու ծառայությանը: Միաժամանակ գիտակցում եմ, որ
հովվական իմ առաքելության ճանապարհին բազում դժվարությունների, խոչընդոտ-
ների և մարտահրավերների առաջ պիտի կանգնեմ՝ մանավանդ նկատի առնելով
1700-ամյա հոգևոր մեր մնայուն ժառանգությունը մեր ժողովրդին հաղորդ դարձ-
նելու ծանր, բայց քաղցր պարտականությունը: Մակայն այսօրվա իմ ուխտը և հույսն
առ Աստված ամուր վահանի պես պիտի գտնեմ ինձ փարակուսանքի և փորձու-
թյան նույնիսկ ամենահուսալքված պահերին: Իսկ յոթ չկարողանամ դիմադրել նե-
ղություններին, այնժամ Դավիթ թագավորի նման հայացքս երկինք պիտի հառնեմ ա-
ղոթելով. «Տուր զօրութիւն ծառայի քոյ, կեցո զորդի աղախնոյ քոյ, եւ արա առ իս
նշան բարութեան»:

Սիրելիներ, երկրորդ կարևոր գաղափարը ծառայությունն է: Ուխտն այն ակունքն
է, որից սկիզբ է առնում ծառայությունը: Քահանայիս համար ուխտի հավաքարմու-
թյունը դրսևորվում է ծառայությամբ: Եթե ուխտը Աստված-հոգևորական հարաբե-
րության հաստատումն է, ապա ծառայությունը հոգևորական-հավաքացյալ կապն
է: Ինքը Հիսուս Քրիստոս՝ Աստծո Որդին, ասում է. «Չեկա ծառայություն ընդունելու,
այլ ծառայելու»:

Երջանկություն է ծառայել մի Եկեղեցու, որի քրիստոնեական արմատները հաս-
նում են առաքելական ժամանակները: Նաև հպարտություն է սպասավորը լինել մի
Եկեղեցու, որն այս փարի փռնում է քրիստոնեության պետական կրոն հռչակման
1700-ամյակը:

Հոգևորականներին ծառայությունը առավել ևս կարևորվում է այս շրջանում, երբ սոցիալ-տնտեսական ծանր վիճակը սպառնում է երիտասարդ մեր անկախ Հանրապետության հիմքերի ամրությանը: Մակայն առավել վտանգավոր են կրոնական-աղանդավորական օտարամուտ և օտարամուլ շարժումները, որոնք իրենց թյուր վարդապետությամբ սպառնում են ջլատել ազգային միասնական մեր ուժերը՝ հեռացնելով մեզ հային հայ պառնոց քրիստոնեական մեր արմատներից ու ազգային-եկեղեցական ավանդույթներից: Մեկընդմիջի հիշենք, որ ազգային մեր առանձնահատկության, հոգևոր մեր միասնականության, պետական հարապետության միջ-նաբերդը Հայ Առաքելական Եկեղեցին է, որ մշտապես եղել է բարեպաշտ իր ժողովրդի հետ և իր ժողովրդի կողքին: Հայն իր կյանքում երեք հիմնական սրբություն ունի՝ Ազգը, Հայրենիքը և Եկեղեցին: Ուրեմն պետք է փոկալ և մեր ուժերի գերազույն լարումով սատարել Քրիստոսապաշտ մեր ազգին, շենացնել Աստվածապարզ մեր Հայրենիքը և պայծառացնել Առաքելական մեր Մայր Եկեղեցին:

Հավաքող մշտաթիվ կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է Աստված հետ համագաղթյալ մեր ուխտի ծխածանը, քանզի Լուսավորչի լուսազարդ փեսիլով Քրիստոս իջավ և ձեռքի ոսկյա մուրճով հարվածեց Հայոց հողին՝ ազդարարելով սեփական Իր ժողովրդի հետ Նոր Ուխտը:

Միրելի քույրեր և եղբայրներ. 1700-ամյակը Աստված կողմից որպես նշան բարության առիթ է ներկայացված մեզ: Մեծ է բարոյական մեր պարտքը առ Սրբազան մեր Հայրերի հավատքը և հոգևոր ժառանգությունը: Այլևս իրավունք չունենք սայթաքելու, իրավունք չունենք շեղվելու և իրավունք չունենք Տիրոջ՝ մեզ պարզված ձեռքն անպարտախան թողնելու:

Ներկաբար, անդրանիկ Պապարագիս պարգամն է Ձեզ, որ 1700-ամյա Հայոց Մեծ Դարձի և 1700-ամյա Նոր ուխտի գլխավոր հանդիսությունների նախօրեին մեկ անգամ ևս անդրադառնաք հոգևոր մեր արժեքներին, ազգային մեր ինքնությանը, գիտակցենք և արժևորենք Աստված մեզ ընծայված շնորհը և մեկ կամք, մեկ սիրտ և մեկ հոգի դարձած մեր ուխտը Նորոգենք առ Աստված: Իսկ եթե մարդկային մեր փրկար բնության պարճառով փոքր-ինչ շեղվենք մեր ուխտից, ապա պարտ է մեզ Դավիթ թագավորի քաջությամբ դառնալ Տիրոջը և ասել. «Տուր զօրութիւն ծառայից քոց, կեցո որդիս աղախնոց քոց, եւ արա՛ առ մեզ նշան բարութեան»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամեն»: